

ուծ տալով ազգային վարժարաններու և հաս-
տատելով յատուկ թերթեր:

Էլ քանի որ համարին ազգիս մէջ իւրա-
քանիւր տարբեր դասանաճիքի հասարակու-
թիւնք ունին իրենց յատուկ մամուլը, օրի-
նաւոր չէ որ նաեւ Հայ հռովմէական հա-
սարակութիւնն ունենայ իր ժողովրդական
հայախօս լրագիրը, որ խորշումները ջնջէ,
օտարամոլութիւնը սանձահարէ, ցնցէ դա-
րաւոր թմրութիւնը, առաջնորդէ դէպ ի լոյս,
մտարկէ դէպ ի գործ:

Օրինաւոր է, բայց կարելի՞ է, յուսալի՞ է:

Հայ-հռովմէական հասարակութիւնն, ա-
րիւթիւն պիտի ունենայ ըսելու որ Ես ալ
գրպան եմ . . .

Anch'io sono pittore!

Հ. Ս. ԵՐԵՄ.



ԱՐՇԱԼՈՅՍ ԵՒ ԱՐԵՒԵԼՔ

ԼՈՒՍԱԽՈՐՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ

(շար՝ տես էջ 199)

ԺԶ.

Ժողով Նիկիոյ. — Արիստակէս եւ այլ Հայ
Եպիսկոպոսք. — Յակովբ Մօքնայ:

ԵԿԵՂԵՑԻՈՅ էութեան կամ կենաց ըն-
թացից մէջ՝ ամենանշանաւոր է այս կէտս,
(Նիկիոյ ժողովն) նա և քաղաքական սեռու-
թեամբ: Հազիւ տարի մ'անցեր էր անոր վեր-
ջին հալածի (Աիկիոսի) բռնամահ կորուե-
լէն, երբ իր և նմանեացն ամենէն ատելի կամ
հակառակ անձինքն, Եպիսկոպոսք, քրիստո-
նէսպ եղած աշխարհաց ամեն կողմերէ՝ հրա-
ւիրանօք կամ հրամանաւ՝ այն աշխարհաց
միապետ ինքնակալին, Կոստանդիանոսի, հա-

ւաքուին ի Փոքր Ասիոյ հիւսիսային արեւ-
մրտեան գաւառի մի (Բիւթանիոյ) Նիկիա քա-
ղաք, իբրեւ ամեն կողմերէ ժողովուրդու յար-
մար գիրք մի ունեցող տեղ: Եթէ կարելի ըլլար
այդ յիշեալ հալածչին և իրեն յառաջագէմ
զործակցաց, Մաքսիմեանց, Գալերիոսեանց,
Դիոկղեսեանց, կորած կոփած կնտացած
զուխնին՝ իրենց յոխորտարար կոխած և գի-
րենք անարգաբար կոխող հողէն՝ վայրկեան մի
վեր կանգնել, ի՞նչ ափսոսութիւն պիտի պատեր
իրենց աչաց այլ մտաց այլ: Այդպէս ի-
րենց սպառնալեօք Հոռո սուր մահ փոխելէն
ի քրիստոնեայ չոք կողմանց աշխարհի՝
քանի մի տարի վերջ, այդ հալածելոց, տան-
ջելոց, նահատակաց զլխաւորքն, Եպիսկո-
պոսքն, զրեթէ նախախնամօրէն հաւաքուած
մօտ այն քաղքին (Նիկիոյ), ուր իրենք՝
Ինքնակալքն և Կեսարք, զլուս գլխի տուած՝
փափայլին, քրիստոնէութիւնը ջնջելու հնարք
հնարել. Հիմայ, զոքա իբրեւ թէ կոխեն կա-
քաւեն իրենց զլլտող վրայ՝ Քրիստոսի յաղ-
թութեան նշանաւ, ազատ համարակ, և
նոյն Քրիստոսի անարգուած մահաւորի մի
անմահուեակ նշանը՝ խաչը՝ կանգնեն ի գա-
գաթան իրենց կործանուած կամ կիսական-
գուէ կոտորանց:

Եթէ դժբա՝ քրիստոսահալածքն՝ չեն կըր-
նար զուխնին վերցնել և ափշիլ, անհնար
է և մեզ այսպիսի յիշատակաւ և տեսքով՝
չգործմանալ չիկանալ Հեզահոգի Յիսուսի հա-
ւատոց՝ համբերատար, աննկուն և հրաշա-
փառ յաղթութեան, և իր այնքան միխնաւոր
նահատակաց փառափայլութեան վրայ: Եւ
չկարենալով այս կիտիս՝ գոնէ այս փոքր չա-
փով զսպիւ մեր գգացումը և զրիչը, դատ-
նանք՝ այդ յիշեալ մեծաշնորհէս ժողովին մէջ՝
մեր ունեցած մասին կամ վիճակեալ աթո-
ռին, մեր պատմըաց քանի մի խոսքը յի-
շելով. ոչ զի լիազոյն և լաւագոյն գրուած
են, այլ զի մերայինք են և սիրելիք:

Իրաց Ժամանակակից մեր ստէպ յիշեալ
պատմիչն, Ագաթանգեղ՝ համառօտիւ յիշէ
(Ճիէ). « Հրաման եւ մեծ կայսրն՝ օգոս-
տականն Կոստանդիանոս՝ ժողովիւ ամեւ-
« նայն եպիսկոպոսաց ի քաղաքն Նիկիաց-
« ւոց: Ե Յայնմօմ մեծ արքայն Տրդատն և
« Ս. կաթողիկոսն Գրիգորիոս՝ Հանգերձեցին

« և արձակեցին զՌատակէս . որ երթեալ Հա-
 « սանէր ի ժողովն մեծ Նիկիոյ՝ ընդ եպիս-
 « կոպոսն ամենայն . ուր՝ ամենայն տիեզե-
 « րացն կարգեցաւ ընդունելութիւն աւան՝
 « դռնիման Հուստօք , կարգք լուսաւորու-
 « թեան , կանոնք պայմանաւորք , աստուա-
 « ծատուր զօրութիւն Հաճոյցն Աստուծոյ
 « անչափ բարձրութեանցն , Ուր և մեծ կայսրն
 « Կոստանդինոս մտեալ՝ խոստովան լինէր
 « զՀաւատան , և օրհնութեամբ պատկեալ ի
 « ժողովոյն , զանոն ի յերկրի թողոյր , և զար-
 « դարութիւն ի յերկրին հաստատէր » : Գծե-
 « ցինք յետին տողս , զի շատ գեղեցիկ և վսեմ
 « ըստած մ'է , և Հեղինակին ուրիշ տեղ ըրած
 « երկարաբանութեանց՝ ներել և փոխարինել
 « տայ : Ապա կ'ըսէ . « Իսկ երանելին Ռուսա-
 « կէս գայր (գառնալով ի Հայս) Հասանէր
 « պայծառ ծագեալ Հաւատովքն և Հաստա-
 « տուն աստուծո՞ւհաճոյ Նիկիական կանո-
 « նօքն . երեւեալ ի Հոյաստան երկրին , ա-
 « սաղի գնէր Թագաւորին և կաթողիկոսին
 « արար՝ զերեւել Սանդուղիտն » . որով
 « Սրբոյն Գրիգորի ի նոյն լուսաւորական
 « կանոնն յաւելեալ , առեալ զիւր վիճակն
 « Հայաստան երկրին՝ պայծառացուցեալ՝
 « Հանդերձ արքայիւն Տրդատայ՝ զամենայն
 « աւուրս կենաց իւրոց լուսաւորէր » :
 « Իսկ ամենախոյզ Խորենացի մեր՝ աւելի
 « պատմարար գրէ (Բ , 20) ժողովոյն պատճա-
 « ռը (Արիստի մուրս վարդապետութիւնը) , և
 « ժողովոյն նախազուեալ եպիսկոպոսապետները .
 « Բիստոն (Βιστων) և Բիկեւոս և (Βικεντινός,
 « Vicentius) երիցունք ի Հոռով՝ քաղաքէ՝
 « ձեռնարկութեամբ սրբոյն Սեդրեստրոսի՝ ի-
 « բրեւ երեսփոխալք այս Պապին) . Աղեքսան-
 « դրոս՝ Աղեքսանդրիոյ , Էւստարիոս Ան-
 « տիոքայ , Մակարիոս Երուսաղեմի , Աղեք-
 « սանդրոս Կ . Պօլսի » : Որոք Հետ պէտք էր
 « յիշել զՌիստո եպիսկոպոս Կորդուբայ Սպա-
 « նիոյ , որ նախագահ կամ առաջնորդ եղաւ
 « ժողովոյն : « Յայնժամ զայ Հասանէ Հրովար-
 « տակ ինքնակալին Կոստանդինոսի՝ առ
 « մեր արքայն Տրդատ , զի զՍ . Գրիգոր ա-
 « ղեալ ընդ իւր՝ ի ժողովն երթիցէ » :

Այս Հրաւէր՝ ոչ միայն վայելուչ էր , այլ
 և զրեթէ անհրաժեշտ ի կողմանէ Կոստան-
 դինոսի և ժողովեցոյն , որք մեղադրելի կ'ը-
 լային՝ եթէ այնպիսի հոգակեալ կենդա-
 նի նահատակ մի չհրաւիրէին իրենց մէջ ,
 ինչպէս հրաւիրեալ և բերեր էին քանի մի
 խոստովանող և շարչարեալ եպիսկոպոսներ
 այլ . որոց մէկն՝ սուրբ Հաւատոցն Համար
 մէկ աչքէն զրկուեր էր՝ . միւս մի էր ձեռ-
 նատ կամ ոտնատո՞ , և այլք իրենց վեր-
 քերը յայնանպէս երեցընէին կամայ ակա-
 մայ . — արդեօք մեր Լուսաւորինց՝ այլ այն
 տասն և չորս կերպ կրած շարչարանաց՝ աչքի
 փուշ բայց մտաց շնորհապալա՝ շառախչեմը՝
 դեռ չէր կրէր վրան . կամ թէ՛ Տրդատայ կրկին
 կերպարանափոխութեամբ ապա առոյգ պա-
 տանուչ պէս պայծառ մարմնով նորոգուելուն
 նման , ինքն այլ նորոգուեր էր . — Հաւանելի
 է որ ի նշան փառաւոր նահատակութեանցն՝
 կային և երեւէին վրան նիւշ պանծալիք ,
 որովք ի տիեզերական ժողովին՝ կըրնար քան
 զբազումս՝ դուշ և քան զընաւս՝ սխրոյթ և
 պաշտելի երեւնալ . վասն այնորիկ « Իւ ոչ
 « Սուրբն Գրիգոր Հաւանեցաւ երթալ , զի
 « մի՛ զառաւել պատիւն՝ վասն խոստովանո-
 « ղական անուանն՝ ի ժողովոյն կրիցէ՝ . որ-
 « ա պէս զի (որովհետեւ) այսպէս փափագանք
 « և մեծաւ փաթով կոչին » : Տրդատայ Հրա-
 ւիրուին այլ շատ վայելուչ և փառաւոր էր .
 այն որ զնաց ի Հոռով՝ յայցեցութիւն դաշ-
 նակից կայսերն , զրեթէ Հարկ էր որ անոր
 դիմաց բազմէր ի ժողովին աշխարհական
 պատուաւորաց մէջ , զերագոյն քան զայս ,
 և միակ Թագաւոր քրիստոնեայ , և այնպիսի
 Թագաւոր : Սակայն քաղաքական զգուշու-
 թիւնք չթողուցին նմա կատարել իրեն եկած
 Հրաւէրքը . վասն զի իր և կայսեր չէմ մա-
 խացող և միացող Պարսիք Թագաւորն (Շա-
 պուհ) ուրիշ Թագաւորաց Հետ դաշնակցեալ
 լուեցայն իրեն (Տրդատայ) այլ սպառնալ .
 « Վասն այնորիկ ոչ եթող առանց իւր զաշ-
 « խարս » (Հայոց) . . . « այլ (ինքն և Գրիգոր)
 « առաքեն փոխանորդ իւրեանց զՌուստակէս ,
 « Հանդերձ ճշմարիտ խոստովանութեամբ եր-

1. Ինչպէս Պատենոս եպիսկոպոսն Հերակլեայ :

2. Ինչպէս Ս . Պափնստիոս :

« կողոնց՝ գրով » : Այսինքն, հաւանութեան գիր գրած են, թէ ինչ որ ժողովն սահմանէ՝ իրենք այլ կ'ընդունին, — ուր էր թէ այդ թղթերն ունենայինք հիմայ : — « Որոյ (Ա. « րիստ.) երթեալ հասանէր մեծին Ղեւոնդի. « և հանդիպի յայնմ ժամու՝ զի մկրտէր (ի « Սինոպ) զԳրիգոր՝ զհայր Գրիգորի Աստուա « ժառանգի... Երթեալ Որոտակէն ընդ մե « ծին Ղեւոնդի՝ հասանէ ի քաղաքն Նի « կիացոց, ուր եղին ժողովեալ Հարք 318, « ի քակտունն Արիանոսաց. . . Ապա դար « ձեալ Որոտակեայ արժանահաւատ բանիւ « և քսան կանոնեալ գլխովք ժողովոյն, զայ « հանդիպի հօրն և արքային ի Վաղարշապատ « քաղաքի. ընդ որ ուրախացեալ Սրբոյն « Գրիգորի՝ սուղ ինչ գոռիս յինքենէ ի Կա « ճոնս ժողովոյն յաւելու, վասն առաւել « զգուշութեան իւրոյ վիճակին » :

Մեր նախնիք կ'աւանդեն, թէ՛ Ս. Լուսա « ւորիչ մեր Նիկիական դաւանութեան կամ Ս. Աթանասի կողմած Հաւատոյ հանգա « նակին ետեւ կցած ըլլալ ինչուան հիմոյ մեր պատարագի առնեն ըստած համառօտ փա « ռատրութիւնը, « իսկ մեք փառաւորեացուք « որ յառաջ քան զյաւիտեանս », և այլն. սակայն, բազմաց ստոյգ կամ հարազատ չե « րեւիր այս. նոյնպէս և այն յիշեալ Գլոսիքն կամ կանոնքն՝ 30 թուով, համառօտ բանք, որ ի Կանոնագիրս մեր գրուած են՝ յետ Ա « ռաքելական և Նիկիական կանոնաց, և յար « ժէր այս սեղ յիշել :

Տրդատայ և Գրիգորի երեւնալէն ի մեծի ժողովին՝ զրկուած ըլլալով, նայինք անոր՝ զոր իրենց փոխանորդ խաւրեցին, յԱրիս « տակէս. որ այժմու սովորութեամբ այսպէս կոչուի, բայց վերոյգրեալ պատմիչք (և այլք՝ շատ հնդ) Ռիատակէս գրեն, որոյ յունական մասնիկը թողլով՝ արեւելեան անուն մի լուսի (Որոտակ). սակայն հաւանօրէն ամբողջ ա « նունն այլ յունական է, իրենց արիստ, αριστος

(ճշմարիտ) բառէն առեալ, որով շատ բար « դեալ անուններն ունին. ինչպէս Արիստոտէլ, Արիստարքոս, Արիստիդէս, և այլն. Եւսե « րիսի զՀայոց դարձն ի Քրիստոսն յիշելու նման է՝ և Կոստանդիանոսի Վարուց մէջ Նիկիոյ ժողովն և շատ Հարս յիշած առնն՝ զմեր աշխարհիս ներկայացուցիչ Արիստա « կէսը յիշելն. զուցէ Կեսարիոյ հայրապետին վիճակեալ միւս եպիսկոպոսաց կարգին դնե « լով՝ լռէ. իսկ Հին յունական՝ յորմէ և լատին այդ Ա ժողովի եպիսկոպոսաց Ֆանկին մէջ՝ (որ հայերէն փոխուած ուլ գտնուի) կերպ կերպ գրուած է անունն. յունարէն Ἀριστάρχης, Aristarches, Aristanes, Aristacius, Aristaces, Acrites.

Փան զանունն աւելի հետաքննելի էր թէ որ կարգի կամ տոսիճանի գասուած է մեր եկեղեցւոյ ներկայացուցիչն ի Նիկիա, և թէ՛ ունէր ազգային եպիսկոպոսակից ընկեր « ներ այլ — Անհնար կ'երեւի իր հետ ուրիշ Հայ եպիսկոպոսաց չըլլալն, բայց թերեւս ոչ իրրեւ աթուակալք. սակայն և այս շատ հաւանական չէ. վասն զի, նախ, ի թիւս աւելի քան 250¹ յանուանէ նշանակեալ ե « պիսկոպոսաց ժողովոյն՝ յիշին եպիսկոպոսք քաղաքաց փոքր Հայոց. ինչպէս, Եփրիսոս կամ Եփրատիոս՝ Սատաղացոց միլիասահման քաղաքին, Եջրալ կամ Եջրգիսոս՝ Սերաստիոյ, և երկու քորեպիսկոպոսք. դարձեալ եպիսկո « պոսք Կոմանայ, Ջեղայ², և այլն. բայց զա « սոնք մեր Լուսաւորչին վիճակէն դուրս հա « մարելով : Երկրորդ, Մեծ Հայոց եպիսկոպոսք այլ նշանակուին այդ բազմաթիւ և բազ « մալփոթ անուանց մէջ. ինչպէս Արտափ կամ Արտափ եպիսկոպոս Խոփաց, որ Մեծ Հայոց մեծ նահանգ կամ աշխարհ մ'էր, և հարկաւ եպիսկոպոսն այլ մեծապատիւ. հայերէն ա « նուանագրութեանց մէջ գրուի « ի Մեծաց Հայոց », Արիստակիսէ անմիջապէս վերջը կամ քովը գրուած և Արտիկէս կամ Կրիստէս, Կրի-

1. Կարծուի թէ աւելի աւանդութեամբ և Աբրահամ Նահապետի ընդոնեաց թուովն՝ 318 կ'ըսուին Հարք ժողովոյն : Մեր մէջ հայերէն Կանոնագրքի մէջ 213 Հարց անուանք կան :

2. Որ չէ Եղանից, որպէս կարծեր է Ժող. վոց հայերէն պատմաբանը պատուական Հայրն. այդպիսի անուամբ սեղ չկայ ի Հայս :

Եղի, նման Տիրիկէս քրմորդի եպիսկոպոսին
անուան, բայց իր աթոռն կամ Թեմն գրուած
է Պենոպոլիս, թէ և այս անուն փոքր Հայոց
կամ Պոնտոսի յարմարի և հաւանորէն է
Diospontus կոչուածն, կամ Helenopontus.
սակայն զորոն թէ զայս և թէ զԱմասիա և
զկոմսնա՝ ի Մեծ Հայս գրած է: Որպէս և
ըլլայ՝ քիչ Հայ եպիսկոպոս երեւնայ ի վի-
ճակէ Լուսաւորդին, և ընդհանրական երես-
փոխան նորա և աշխարհին՝ Արիստակէս
միայն, որպէս և Պարսից՝ միայն Յովնաննէս
քրդեպիսկոպոս մի ներկայանալ: Դետ օրի-
նակը անուանակարգութեանցն՝ զմերս ոչ ի
Հայոց գրեն՝ այլ Եպիսկոպոս Հայոց, (ինչ-
պէս երբեմն Մեհրուժանայ համար ըսուե-
ցաւ՝), իբրեւ զլուս ամենայն եպիսկոպոսաց
գաւառին իւրոյ և ներկայացուցիչ եկեղեց-
ւոյն: Յիշեցինք վերը՝ որ Արիստակէս բերաւ
Հայոց կաթողիկոսին և թագաւորին՝ ճշմա-
րիտ խոստովանողքեան գիր մի. որում հա-
ւանորէն ձեռք զարկեր էին և շատ կամ
քիչ եպիսկոպոսք Հայոց. ապա հարկ չէր ա-
նոնց երթալն այլ ի Նիկիա: Քէ աշպարհի
խոստովանութեան կանխիկ գիր մի գրեցին
և զրկեցին՝ ուրիշ վիճակաց եպիսկոպոսա-
պետք կամ եպիսկոպոսք, ինձ յայտնի չէ:
Քիչ մի վերը յիշուած Պարսից եպիս-
կոպոսին հետ յիշէ Խորենացի նա և մեր ծա-
նօթ և զրացի մեծ եպիսկոպոսն Մարնայ,
զՍ. Յակովբ, իբրեւ Եղեւսոյ, Եռքայ կամ
Եռքիթոս եպիսկոպոսին հետ ուղեկից Արիս-
տակիոսի և Ղեւոնդիոսի: Որքան մեծ են

արժանիք Մծբնացոյն և որքան մեծարեալ
ի մերայոց՝ յայտնէ իր տօնի յիշատակն և
շարականն. Յայսմաւուրք և աւանդութիւնք
աւելի մեծընեն՝ բոնով, թէ այնքան Ս.
հայրապետաց մէջ՝ Կոստանդիանոս Ս. Յա-
կոբայ քով տեսնէր Հրեշտակ մի, Յակովբ այլ
Կոստանդիանոսի քով, Մեր եկեղեցական և
քաղաքական պատմութեան մէջ այլ յիշա-
տակներ ունի այս մեծ և ախտուհալած հայ-
րապետ, այլ և անվաւեր և ռամկական
գրոյցք. որոց կարգին համարելու է և անոր
ազգայնականութիւնն ընդ Գրիգորի Լուսաւորդի,
թէ և մի զգոնագոյն պատմչաց մերոց ըսած
ըլլայ, — Ոչ պակաս քան զնա մեծացընեն
Յայսմաւուրք զԱրիստակէս՝ ըսելով. « Մե-
« ծափառ և զարմանալի հրաշիւք փառա-
« զարեալ ի մէջ բազմախումբ Հաւանցն
« Սրբոց՝ Հանդիսաւոր երեւեալ ». այլ և ու-
միկ կերպով մի հրաշալցործութեան:

Թողովլ այս գրահռչակ Ս. տիեզերական
ժողովոյն մէջ խօսուածն և եղածն, որ դեռ
եւս կորօտ է լուսաբանութեան, քիչ շատ
ժողովիւրց անուան ստուգութեան նման,
յիշենք որ անոնց մէջ իբրեւ մի յ'13 զխա-
ւօր վիճակապետաց՝ Ղեւոնդիոս՝ վեցերորդ
կամ եօթներորդ է, և այդպէս ստորագրէ
յանուն իւր և իր զխաւօր մետրապօլտաց
կամ վիճակաց, « Ղեւոնդիոս Կեսարաւ Կա-
« պաղովկեցոց. . (վկայեմ) վասն ամենայն
« եկեղեցեաց՝ որք է Կապպադոկիայ, ի Պա-
« զատիա, ի Պոնտոս Դիփոպոնտեան, ի Պափ-
« զուգոնիա, ի Պոնտոս Պոլիմոնական, ի

1. Եղիպտական ցանկին մէջ ի Մեծ Հայո՝
գրուին Արիստոքոս և Արիկէս. Ասորացն, Արիս-
տակիոս և Ակիրտէս. Նշանաւոր է Արաքացւոց
ցանկին յիշելն ի Մեծ Հայոս միայն Չորիգոր:
Մեղծ ծանօթ մէկ հասիկ Հայերէն ցանկն ունի,
« ի Փաղուէ Հայոց՝ Եւստաղիոս ի Սաբամպէ,
« Եւթիոս ի Սատաղէ, ի Մեծաց Հայոց՝ Ափս-
« տակէս » կամ Ակիրտէս:

2. Եւ միայն ասոնք տեսեր են կ'ընէ զլոյսն
փայլատակեալ ի վերայ հօր Գրիգորի Աստուա-
ծաբանին՝ մկրտութեանն ատեն:

3. Իբր թէ Արիստակէս փոքրահասակ տեղք
ուեննալով՝ խեղճուի մէկ մի երեսցոր և ուր-
համարհուեր է ի ժողովրդէն. բայց նա իր ինչ

ըլլալը ցուցընելու համար (որ Սրբոց չի վա-
լեր), ըստ ճարտասան և ճամբարակ գրողի մի,
Նիկիոյ մօտ ելած (հիմալ ցամքած) լճակի մի
մօտ երբ հողադուրձք զինքը ծաղրելով՝ արօրն
իր ձեռքին կու տան, նա « ի վերայ կապու-
« տակ աշխոյն Լայնատարած լճին լիւթեմ
« վեհաւան և քսոմնածածան կորովակի սիգա-
« շարծ Թանգրաւթեան Դուրքն ովկիանայն (1),
« սիգաւայլ ոտիւք օրրն խոցութեամբ օխարցու-
« ցեալ, անվեհր զիտմամբ յիտուաբար (Բ)
« Նկատեալ տեղին հասանէ », և այլն. և ջրոց
վրայ ոչ միայն քայլէ այլ և արօրով Հրկիէ,
և դառնայ, և առ յիշատակէ՝ լճափին վրայ Է.
կեղեցի մի կանգնեն:

« Ընծ և փոքր Հայս » : Գեղարհոս Կիւղի-
կեցի եպիսկոպոսն, (ի վերջ Ե դարու) որ
քան զուրիշներն աւելի կրօնքի է քիչ շատ
հաւաքել այս մեծ ժողովին մէջ Ս. Հարց Ը-
սածներէն, Ս. Ղեւոնդոսի քանի մի խօսք
եւս յիշէ՝ բայց ոչ բացայայտ և լիացուցիչ :

Միշտ ցանկալի եղած է այլ ոչ գտնուած՝ ժո-
ղովոյն մէջ ամեն խառնածքն և գրուածքն,
որոց բովանդակութիւնն անշուշտ և մերս
Արիստակէս տարած էր ի Հայս, ուր նոյն-
պէս չեն գտուիր, բաց ի վերոյիշեալ 20 կո-
նաններէն և աւելի համառօտ կրկնութիւն-
ներէն. որ կոչուին « Կանոնք Երկրորդ Նի-
» « կիսկանք, զոր եղին 318 եպիսկոպոսքն,
« կրկնաբանելով կարճ ի կարճ, զտեւք
« 114 » : Ուրիշ գրող մի Արիստակէսի հա-
մար կ'ըսէ, թէ բերաւ « զԳիր Կանոնաց թը-
« լեալ միահամար կարգաւ տունն 51 » :
Միւրթար Գոշ (Դատաստ. ՃիԳ), 30 զլուխ
կանոն կ'ըսէ Նիկիոյ ժողովոյն² : Ներսէս Գ.,
կաթողիկոս (640-60) ի թղթին առ Կոս-
տանդին Գ. կայսր, գրէ. « Սուրբն Ռատակէս
« ընկալաւ զհրամանն հաւատոյ ի Ս. ժողո-
« վոյն և ի մեծ թագաւորէն Կոստանդինա-
« նոսէ. բերեալ մատոյց առաջի քրիստոսա-
« սէր թագաւորին Տրդատայ և Ս. քահա-

1. Գիտելի է որ այն ժամանակ գրեթէ բոլոր
արեւմտեան փոքր Ասիա երկու եկեղեցական
մեծ վիճակ կամ նահանգ էր բաժնուած, Ասիա
և Պոնտոս. այս երկուքին պատշաճին այդ յի-
շեալ դաւառք կամ աշխարհք և ստորակարգեալ
վիճակք, որոց զլիւսաւոր եպիսկոպոսապետ էր
Կեսարիային, այն առեն Ս. Ղեւոնդ : Թերեւս
արժէ դիտել, որ այդ եպիսկոպոսաց վիճակաց՝
կան չին ցանկը որ չեն յիշեր զՄեծ Հայս,
մոռացութեամբ, թէ այդ աշխարհին եկեղեց-
ւոյ անմահ գրիչ համար :

2. Արժան համարիմ յիշել, որ թէպէտ մեր
նախնեաց գրող մէջ չենք գտներ Նիկիոյ ժո-
ղովոյն Պատմութիւն մի երկարորէն գրուած,
բայց այդպիսի համառ մի լուռած է յօտարաց
ԺԳ գրութիւն վերջեր. մինչեւ ի պատրաստու-
թեան Բ սեւեհնդոսին Լիւնն, յամի 1276 :
Գրիգոր Ժ պապն Հռովմայ՝ հոգով զընդ է առ
Լեւոն Բ թագաւոր մեր Հայոց և առ Կաթողի-
կոսն, որ թարգմանեն զայն և շուտով խաբեն :
Ինչ պատահեան տաւած են մերայինք՝ յիշուած
չէ, և ոչ այլ ժողովոյն մէջ յիշուի :

« նապապետին Գրիգորի, հանդերձ հրամա-
« նօք երկանիկն Կոստանդինոսի » : Յետին
խօսքն յայտնէ՝ որ բաց ի կանոնաց և կար-
գաց եկեղեցականաց՝ կայսրն այլ եր կողմէն
գրեր էր պատասխան թղթոց մեր թագաւո-
րին և քահանայապետին, ինչպէս որ վայն-
լուչ էր, թէ և չի յիշեր Աշարթանիլը³ : այլ
յետ յիշելու Արիստակէսի բերածները՝ այ-
նուհետեւ Լուսաւորչի ջանքը՝ բանիւ և գրով
յիշեցընէ. որ և կնիք է իր լուսաւորութեան,
և որով մենք այլ կնքենք, թողով մանրամաս-
նարար իրեն հետ ման գալն ի Հայաստան,
հիթանոսութեան շէնքերը ջնջելու, որ մեծ
մասամբ այլ քաղաքական և աշխարհագրա-
կան պատմութեան վերաբերին :

Շարայարեւի Է. Գ. Գ. Մ. ԱԼԵԱՆ

ՀԱՆՐԵՍ ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ

ԿՈՐԻՆԻ ՎԱՐԳԱՅԵՏ ԵՒ ՆՈՐԻՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆԻՐ՝
ԳԻՐԳ ՄԱՍԱՐԱՅԵՏԻՈՅ, ԵՒԹԱՂ ԱՂԵՐՈՒՆԻՐԱ-
ՅԻ, ԱԳԱՍԱՆԳԻՆՈՍ ԵՒ ԺԱԽՏՏՈ ՔԻՆՁԱՆԻ.
Հանդերձ դիտողութեամբք, տեղեկութեամբք,
և յուսաբանութեամբք : Գրեաց Նուրայր Ն.
Բիւզանդացի : Տիպիս. 1900 :

Քաջածանօթ բանասէրս, համառօտ —
« Որքան կարեւր՝ զայն աննմ » — մեծոյ
մէջ ամիոպիւր է բոտ բաւականի մեծ ութա-
ծալ հատոր մը՝ գրեթէ 550 էջեր բաղկա-
ցած : Երկ արժանապէս գրուատելի, գործ
գծուարարիտուն, գործ՝ երկայնամիտ համե-
մատութեանց պտուղ. — և եթէ ներուի մեզ
բան, թուի թէ բաց ի նորագիւտ բանասի-
րական կէտերէ՝ ունի մեծագոյն առաւելու-
թիւն մը, այսինքն՝ բլլալու, վերջին տա-
րիներս հրատարակուած շատ մը անիմաստ,
քաշքշած, ամենախառն քննադատականները
ի բաց հանելով, յոյժ սակաւաթիւ դիտա-
հասկանալի, կարգաւորեալ դրսեւումբ բա-
նասիրական հրատարակութիւններէն մին :
Այլ և զայս չենք ուզեր ձրի կերպով բաժ-
բլլալ :